ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ. Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), *Երևան, «Լուսակն» հրատ., 2009, 248 էջ:*

Օսմանյան կայսրության պատմության բազմաթիվ հիմնահարցեր մշտապես եղել են ինչպես համաշխարհային, այնպես էլ հայ արևելագիտության ուշադրության կենտրոնում: Վերջին տասնամյակներին, մասնավորապես պայմանավորված հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի արագացմամբ, օսմանագիտության բնագավառում բազմապիսի խնդիրների մեջ ավելի ու ավելի հաճախակի են դարձել գիտաքաղաքական անդրադարձներն Օսմանյան կայսրության բնույթի, այնտեղ ապրող բազմաթիվ ժողովուրդների կարգավիճակի, սուլթանական կառավարության վարչաժողովրդագրական միտված ձեռնարկումների, հայերի, ասորիների, բուլղարների, հույների ու այլ ժողովուրդների նկատմամբ ազգային, կրոնական խտրականության, ոչ մահմեդական ժողովուրդների ֆիզիկական բնաջնջման քաղաքականության հարցերին:

Այդուհանդերձ, պատմագիտության մեջ թվարկված հիմնահարցերի վերաբերյալ եղած ծանրակշիռ գիտական գրականության առկայության պայմաններում իսկ, շատ ու շատ հիմնահարցեր, որոնք ունեն գիտաքաղաքական արդիական կարևորություն, ոչ միայն չեն գտել իրենց հայեցակարգային լուծումները, այլև շարունակում են մնալ տակավին չուսումնասիրված: Ընդորում, առ այսօր միևնույն խնդրի վերաբերյալ հանդիպում են տրամագծորեն հակառակ տեսակետներ:

Պատահական չէ, որ Օսմանյան կայսրությունը որպես բյուզանդական քաղաքակրթության թշնամի լինելու հասկանալի մոտեցումների կողքին, հնչում են տեսակետներ, որոնց համաձայն այդ պետությունն ուղղակիորեն ներկայացվում է որպես նախորդ քաղաքակրթության շարունակող ու զարգացնող: Ընդսմին, վերջին մոտեցումները Թուրքիայի Հանրապետության վարած պետական քաղաքականության հետևանքով հաճախ հնչեցվում են նաև միջազգային հեղինակավոր ամբիոններից: Թերևս, դրանով պիտի բացատրել այն տխուր փաստը, որ 1999 թ. ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի հարցերով կազմակերպության՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մակարդակով նշվում է Օսմանյան կայսրության հիմնադրման 700-ամյակը՝ որպես պատմական կարևոր իրադարձություն:

Վերոհիշյալը հուշում է, որ այսօր էլ համաշխարհային օսմանագիտության մեջ կան լրջագույն, համամարդկային նշանակություն ունեցող չլուծված ու խեղաթյուրված խնդիրներ, որոնց պարզաբանման համար պահանջվում են մեծ ջանքեր նաև հայ արևելագետներից: Այդ տեսանկյունից միանգամայն ողջունելի է ճանաչված ու հմուտ պատմաբան Ռուբեն Սաֆրաստյանի տասնամյակների տքնաջան աշխատանքի համապարփակ արդյունք հանդիսացող սույն մենագրության ստեղծումը, որը, մեր համոզմամբ, գալիս է ոչ միայն լրացնելու շատ խնդիրներում առկա բացը, այլև հայեցակարգային մակարդակով պարզաբանելու Օսմանյան կայսրության պատմության վերաբերյալ գիտաքաղաքական կարևորություն ունեցող բազմաթիվ հիմնահարցեր, մասնավորապես այդ տերության կառավարող շրջանակներում ցեղասպանության ծրագրի ծագումնաբանության բարդ ու հակասական խնդիրը:

Ռ. Սաֆրաստյանը հիմնահարցի հետազոտության բնագավառում վաղուց համարում ունեցող գիտնական է: Դրանում մենք քանիցս համոզվել ենք՝ ծանոթանալով խնդրո թեմայով նրա մենագրություններին, բազմաթիվ հոդվածներին ու հրապարակային ելույթներին:

Շատ ուշագրավ է գրախոսվող մենագրության կառուցվածքը: Հեղինակն առա-

ջարկում է նաև աշխատության յուրահատուկ բովանդակային կառույց, որն ավելի շահեկան ու կիրառական է դարձնում հիմնականում տեսական խնդիրներ առաջադրող սույն հետազոտության արդյունքը:

Եթե յուրաքանչյուր գիտական աշխատության արդիական նշանակության, թեմայի ուսումնասիրվածության աստիճանի, աղբյուրագիտական հենքի, գրականության տեսության վերաբերյալ առաջադրված հարցադրումներին հեղինակներն ընդհանուր գծերով անդրադառնում են ներածության մեջ, ապա այդ ամենը Ռ. Սաֆրաստյանը, նախընտրելով ավելի դժվարին ճանապարհ, կատարում է հետազոտության ողջ ընթացքում: Ուստի պատահական չէ, որ եթե ընթերցողն առաջաբանում վերոհիշյալ հանրագումարային հարցադրումներին լիարժեք պատասխաններ չի գտնում, ապա դրանց հանգամանալից քննական մոտեցումներին հանդիպում է ուսումնասիրության համապատասխան բաժիններում, որոնք բոլորն էլ գրված են տեսական-բանավիճային մեթոդով:

Աշխատության առաջին մասում Ռ. Սաֆրաստյանը խոսում է գիտաքաղաքական գրականության մեջ ցեղասպանության հայեցակարգի ձևավորման հարցի մասին, վերլուծության ենթարկում այդ խնդրում ցեղասպանագետներ Հ. Ֆայնի, Ջ. Փորթըրի, Վ. Դադրյանի և այլոց տեսակետները, ըստ արժանվույն գնահատում Ռ. Լեմկինի ներդրումը «ցեղասպանություն» եզրույթի շրջանառման գործում՝ միաժամանակ չմոռանալով վերջինիս ենթարկել քննադատության՝ այդ ձևակարպման մեջ պետության ունեցած դերի հարցը շրջանցելու համար: Կարծում ենք, որ այստեղ հեղինակը կանգ է առնում՝ Ռ. Լեմկինին «խնայելով» նրա հայտնի բանաձևում այնպիսի մի ձևակերպման «մոռացության» համար, որպիսին ցեղասպանված էթնոսի տեղաբնիկ լինելու, նրա հայրենազրկվելու հանգամանքն է, որը հասկանալիորեն խիստ կարևոր է հատկապես հայերիս համար:

Արժեքավոր է Ռ. Սաֆրաստյանի այն դիտարկումը, որ ցեղասպանության երևույթի բանաձևման համար խիստ կարևոր է դիտավորության հանգամանքը: Ուստի հեղինակը մանրամասն անդրադառնում է այս խնդրին, պարզաբանում այդ հարցում ֆրանսիական օրենսդրության մեջ տեղ գտած «համակարգված ծրագրի իրագործում» հասկացությունը:

Միանգամայն իրավացի է Սաֆրաստյանը, երբ քննադատական խոսք է ուղղում նաև խնդրո թեմայի լավագույն մասնագետներից մեկի՝ Վ. Դադրյանի հասցեին՝ ցեղասպանության գործողության բնութագրման մեջ պետության դերակատարության փոխարեն նախապատվությունը, այսպես կոչված, «քաղաքական կուռ կուսակցությանը» տալու համար:

Աշխատության ամենահաջողված մասերից է նաև «նախացեղասպանության» եզրույթի հարցին նվիրված բաժինը, որտեղ հեղինակը բացահայտում է թուրքական հասարակության ազատական շրջանակներում տեղ գտած այն թյուր կարծիքը, թե առաջին աշխարհամարտի տարիներին հայերի հետ տեղի ունեցածը ոչ թե ցեղասպանություն էր, այլ լավագույն դեպքում՝ միայն նախացեղասպանություն:

Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանության դժվարին խնդրի ողջ էվոլյուցիան բացահայտելու համար Ռ. Սաֆրաստյանը համակողմանի վերլուծության է ենթարկում Օսմանյան կայսրությունում XIX դ. 20–30-ական թվականներից ծայր առած բարեփոխումների՝ թանզիմաթի քաղաքականությունը, մատնանշում, որ արևմտամետ թուրք «բարեփոխիչներն» օրեցօր քայքայվող տերությունը կործանումից փրկելու համար ոչ մահմեդական ժողովուրդներին ձևականորեն, թղթի վրա իրավահավասար կարգավիճակ շնորհելու քայլերով իրականում օրեցօր մահմեդականներին գրգռել են քրիստոնյաների դեմ, հատկապես թանզիմաթի երկրորդ փուլում՝ 1850-1870-ականներին: Պատահական չէ, որ 1856 թ. ընդունված Հաթթը հյումայոնում տեղ են գտել նախացեղասպանական իրավիճակ ենթադրող իրավական ձևակերպումներ՝ ոչ մահմադականների գործունեությունը հսկելու, նրանց միայն կրոնական համայնք դիտելու, ազգաձուլելու, թուրքական «վա-

թանդաշլիքը»՝ հայրենասիրությունը կարևորելու վերաբերյալ:

Օսմանագիտության մեջ միանգամայն նորույթ են Սաֆրաստյանի աշխատության՝ «Նոր օսմանցիների» գործունեության ու գաղափարական դրույթների վերհանումը: Հեղինակը համոզիչ փաստերով, թուրքական աղբյուրների նյութերի համադրմամբ ապացուցում է, որ թուրք ազգայնամոլական տրամադրությունների աճը պայմանավորված էր պետական աջակցությամբ, որի հետևանքով արդեն 1875–1876 թթ. բուլղարները կանգնած էին նախացեղասպանական իրավիճակի առջև:

«Ցեղասպանական ծրագրերի համեմատական վերլուծություն (1876-1920 թթ.)» խորագիրը կրող բաժնում Ռ. Սաֆրաստյանը բազմալեզու հարուստ գրականության քննությամբ ուրվագծում է ցեղասպանության ծրագրի հետագա ձևավորման գործընթացը գաղափարական ու գործնական հողի վրա՝ XIX դ. վերջին քառորդից մինչև 1920 թ.՝ Հայոց ցեղասպանությունը թուրքական քաղաքականությունը դիտարկելով մեկ շղթայի մեջ՝ համիդյան ժամանակներից մինչև քեմալականներ:

Բավարարվելով Ռ. Սաֆրաստյանի կատարած հետազոտական ահռելի աշխատանքի դրական հատկանիշների միայն համեստ մասի թվարկումով՝ կցանկանայինք, որ հեղինակը, խնդրի հետազոտությունն ամբողջ Օսմանյան կայսրության պատմության ընդհանուր հետնախորքի վրա ներկայացնելու նպատակով, հետագայում հետազոտության նյութ դարձներ նաև նախորդ՝ XVI–XVIII դարերի ժամանակաշրջանը: Գաղտնիք չէ, որ հենց այդ դարերում պարսկաթուրքական երկարատև պատերազմների, ջալալիների շարժման, օսմանյան ռազմավարչական մարմինների իրականացրած վարչաժողովրդագրական ձեռնարկումների, զանգվածային բռնագաղթերի ու մահմեդականացման, Արևմտյան Հայաստանում քրդերի վերաբնակեցման քաղաքականության թիկունքում, ի վերջո, կանգնած էր սուլթանական կառավարությունը, այսինքն՝ պետությունը: Այլ հարց է, որ այդ դարաշրջանում դեռ պետականորեն մշակված ցեղասպանական ամբողջական ծրագրեր չկային, բայց դրանց ծիլերը, անշուշտ, առկա էին:

Ռ. Սաֆրաստյանի «Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876–1920 թթ.)» մենագրությունը նոր ու ծանրակշիռ խոսք է ոչ միայն Հայոց ցեղասպանության պատմության հետազոտության, այլև համաշխարհային ցեղասպանագիտության բնագավառում և ունի գիտաքաղաքական հույժ կարևորություն Հայկական հարցի ու ցեղասպանության վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների ձևավորման հարցում:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ